ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 31-ի գիշերը Հոգևոր Ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կազմակերպվել էր ամանորի ավանդական սեղանը, որի շուրջ տեղ էին գրավել Վեհափառի կողքին՝ Տիրամայրը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միարան հայրերը, վանքի պաշտոնեությունը, Ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը։

Քառաձայն երգված «Հայր մեր»-ից և հայրապետական օրհնությունից հետո, վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանը, կատարելով երեկույթի բացումը, շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, որ բարեհաճել էին անձամբ սեղանակից լինել միարանության և Ճեմարանի ուսանողության։ Մահացող տարվա բերած պարգևները թվելուց և ծնող նոր տարվա մասին բարեմաղթություններ անելուց հետո, վերատեսուչը խոսքը տվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ. Ա. Ղարիբյանին։ Հարգելի պրոֆեսորն իր բովանդակալից խոսքն ավարտեց խանդավառ բաժակաճառով՝ արեշատություն և երջանիկ գործունեություն ցանկանալով հայ ժողովրդի հոգևոր առաջնորդ Վեհափառ Հայրապետին։ Հուզիչ, նշանակալից ճառեր արտասանեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պ. Ա. Տիրացյանը, հոգեշնորհ Հայրիկ արեղան, Ճեմարանի դասախոսներ պ. պ. Ա. Նագարյանը, Ա. Հատիտյանը, Ս. Բաղիրյանը և Վեհարանի դիվանապետ Հ. Առաքելյանը, մինչ ուսանողները զվարթացնում էին հավաքույթը իրենց արտասանություններով, երգերով ու շարականներով։

Միարաններին և ուսանողությանն ուղղված հայրապետական իմաստալից խրատական խոսքից Վեհափառ Հայրապետը և թևաղրեց ներկաներին՝ նոր տարվա հետ վերանորոգվել որպես քրիստոնյա մարդ, բարոյական նկարագրով աղնվանալով մոտենալ կատարելության և արժանանալ Աստուծո որդեգրության շնորհին։ Վեհափառ Հայրապետը հորդորեց լրջորեն ըմբռնել կաղանդի այս գիշերվա խորհուրդը և խոստանալ սեփական խղճի և Աստուծո առաջ՝ սրտագին նվիրումով ծառայել Մայր Աթոռին, բարձրացնելու համար նրան իր արժանավայել կատարին և դնելու պատմական և առաքելահաստատ սուրբ ճանապարհի վրա, որ իրն է եղել։ Վեհափառ Հայրապետն իր ներշնչյալ խոսքերն ավարտեց մի շարք բարեմաղթություններով՝ հայ ժողովրդին, Հայրենիքին և Հայ Եկեղեցուն ցանկանալով հետագա հաջողություններ։

Ժամը 12-ն է։ «Շնորհավոր նոր տարի»,— զվարթաձայն ավետում է Երևանի ռադիոն։

Հանդեսը շարունակվում է ավելի ուրախ և ավելի խնդությունալից։

Հանդեսի կեսին Վեհափառ Հայրապետը, նոր տարվա առթիվ, Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ նշանակվելու կապակցությամբ, Տ. Դոմիտաս վարդապետին պարգևատարում է լանջախաչով։

Վեհափառ Հայրապետը նոր տարին այսպես դիմավորեց իր միարանների և իր որդիների հետ, բաղմած կաղանդի նույն սեղանի առաջ։ Այդ օրը պատմական և անմոռանալի մի օր հանդիսացավ Մայր Աթոռի և Ճեմարանի կյանքում, միարանների և ուսանողների համար։

Ուշ դիշերին, ամանորի այս ավանդական և նշանակալից հավաքույթը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԸ ՄԱՅՐ ԱՔՈՌՈՒՄ

Փրկչի Ծննդյան սրբազան տոնակատարությունները Մայր Աքոռում այս տարի ևս անչափ մեծ հանդիսավորությամբ և խորին խորհրդով։ Առավել մեծ էր հավատացյալների բազմությունը, որը փութացել էր Էջմիածին երկրից, շրջաններից, գյուղերից և Միության հեռավոր վայրերից։

Վեհափառ Հայրապետը Ճրագալույցի երեկոյան և Ս. Ծննդյան օրը Մայր Տաճար առաջնորդվեց ավանդական հանդիսավորությամբ ու շուրջով, առաջնորդությամբ միաբան հայրերի, քահանաների և սարկավագների։ Հետում էր «Հրաշափառ» շարականի և դանդերի ներդաշնակ հյուժշտությունը։ Հավատացյալները շարք առ շարք խառնում էին թափորի շուրջ և Մայր Տաճարի կամարների տակ։

Ճրագալույցի երեկոյան սուրբ պատարագը մատուցեց գերապատիվ Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, խորունկ ջերմեռանդությամբ։

Մայր Աթոռը հանդիսավոր ցնծությամբ փառաբանում է մանուկ Տիրոջ Ս. Մեսության։

Եկեղեցական արարողությունները կատարվում են կանոնավոր և հոգեղմայլ երդեցողությամբ։ Հայաստանյայց Եկեղեցու հուզիչ շարականները իրենց դաշն ու ողջունող մեղեդիներով խառնում էին ջերմեռանդ հավատացյալների հոգիներին և լցնում քրիստոնեական անպատում գվարթությամբ։

Քրիստոսի սուրբ և հրաշափառ Ծննդյան տոնի առթիվ առիթով Մայր Տաճարում առ Աստված էին վերատարվում Հայոց Հայրապետի և միաբանության ու հավատացյալ ժողովրդի սրտաբուխ աղոթքները։

Ս. Ծննդյան պատարագը մատուցեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը՝ խորունկ ապրումներով ու հուզիչով։

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» ավետիք Միածնակ Տաճարի Ս. Սեղանից հնչեց Հայոց Հայրապետի սուրբ շրթներով և ալիք-ալիք տարածվեց։

Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան պատգամն ընդունվեց հավատացյալների կողմից հոգեկան մեծ հրճվանքով և երկյուղածությամբ։

Սուրբ պատարագից հետո մեծաշուք հանդիսությամբ կատարվեց Ջրօրհնեքի սրբազան տարարողություն։ Հավատացյալները երկյուղածությամբ վերցրին օրհնած ջուրը և հոգեպես պայծառացած մեկնեցին իրենց տները։

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետի ընտրությունից և դահակալությունից հետո հոգևոր ասպարեզ ընդարձակվեց ցանկացողների թիվը օր ավուր ավելանում է, ինչ որ հոգեկան մեծ հրճվանք է պատճառում բոլոր հավատացյալներին։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ հունվարի 15-ին Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ քահանայական երկու ձեռնադրություն, ձեռամբ դերաշնորհ Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի։ Քահանայական կոչում շնորհվեց՝

1) Ամրատ Մատենյանին, որը վերանվանվեց Տ. Հարություն քահանա։ Նորընծան Արմաշի դպրևանքի նախկին սաներից է, ունի համապատասխան անհրաժեշտ պատրաստություն քահանայական ասպարեզում՝ արժանավոր կերպով ծառայելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն։

2) Գրիգոր Տեր-Մարտիրոսյանին, որը վերանվանվեց Տ. Մարտիրոս քահանա։ Նորընծան Աստուծո գործին ջերմեռանդ հավատացյալն է և սիրված է իր հավատացյալներից։ Նա իր հավատի կրակով վսահ ենք կջերմացնի նաև հավատացյալների կրոնական և հոգևոր դգացմունքները։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԹԲԻԼԻՍԻ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Ս. Ծննդյան տոնակատարություններին մասնակցելու համար (Հին տոմարով), հունվարի 16-ին Թբիլիսի մեկնեց գերապատիվ Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը՝ ընկերակցությամբ Ճիրակի Ընմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս վարդապետի, Լենինականից Տ. Արամ քահանայի և Էջմիածնից չորս նորընծա սարկավագների։

Հունվարի 19-ին Սահակ սրբազանը Ս. Ծննդյան տոնի առթիվ հանդիսավորապես պատարագեց, Թբիլիսիի հայ հավատացյալներին հաղորդեց Վեհափառ Հայրապետի օրհնությունները և խոսեց Ս. Ծննդյան գեղեցիկ քարոզ։

Ամսի 21-ին սրբազանը վերադարձավ Մայր Աքոռ։

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի բարձր հովանավորությամբ և բարեհաճ կարգադրությամբ Բուլղարիայից Մայր Աթոռ ժամանեց պ. Գրիգոր Փափազյանը՝ հոգևոր-եկեղեցական պատրաստության որոշ շրջան անցկացնելուց հետո կուսակրոն քահանա ձեռնադրվելու նպատակով։

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԱՐԵՂԱՆ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հունվարի 16-ին, Ս. Սենդյան տոների կապակցությամբ (հին տոմարով), Բաթումի մեկնեց հոգեշնորհ Տ. Վահան արեղա Գալամդարյանը, ընկերակցությամբ բարեշնորհ Հովհաննես սարկավագ Դանիելյանի։

Ամսի 19-ին, Ս. Սենդյան օրը, հայր սուրբը պատարագեց և անդր հավատացյալ հայ ժողովրդին հաղորդեց Վեհափառ Հայրապետի օրհնությունները և բանին կենաց բարդությամբ մխիթարեց հավատացյալ ժողովրդին։

Սենդյան տոներից հետո հայր Վահանը վերադարձավ Մայր Աթոռ։

ԱՐԵՂԱՑԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հունվարի 22-ին Մայր Տաճարում տեղի ունեցավ շնորհունակ Փայլակ սարկավագ Անթարյանի կուսակրոն քահանա ձեռնադրության շնորհարաշխությունը՝ դերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոսի ձեռամբ։ Նորընծան վերանվանվեց Տ. Մեսրոպ արեղա։

Ձեռնադրությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան, վեղարի տվչությունից հետո, նորընծան, Տ. Սահակ եպիսկոպոսի և միաբանության անդամների կողմից առաջնորդվեց Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը։ Վեհափառ Հայրապետը, համբուրելով նորընծայի ճակատը, հուգիչ շնորհավորական խոսքերով հորդորեց նորընծային լինել միշտ առանց ամաչելու, միշտ պատրաստ դտնվել հոգևոր կոչման և ծառայության դիրքերում՝ հոգուտ եկեղեցու, ժողովրդի և Հայրենիքի։

ԲԱՐՁՐԱԳԱՏԻՎ Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

Նորին վեհափառության հավանությամբ և Գերագույն Հոգևոր Խորհրդի կարգադրությամբ հունվարի 2-ին Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ նշանակվեց հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

Շիրակի թեմի նորընտիր առաջնորդական փոխանորդը Մայր Աթոռի շնորհալի և զարգացած միաբաններից մեկն է։ Վստահ ենք, որ նա լավագույնս կհավելի իր թեմը՝ զարկ տալով հավատացյալների հոգևոր զարգացման և եկեղեցու պայծառացման նվիրական աշխատանքներին՝ իր ձայնական բնատուր ձիրքերով և վարչագիտությամբ։ Հաջողություն ենք ցանկանում հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետին իր նոր և պատասխանատու պաշտոնում։

ՀՆԴԻԿ ԱԿԱՆԱՎՈՐ ԳՐՈՂ ԿՐԻՇԱՆ ՁԱՆԴՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 6-ին Մայր Հայրենիք ժամանած հնդիկ ականավոր գրող, հասարակական գործիչ և խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ պ. Կրիշան Ձանդրը եղավ Մայր Աթոռում։ Մայր Տաճարի շեմքին նրան դիմավորեցին հոգեշնորհ Եղիշե և Հայրիկ արեղաները, որոնք և հանգամանորեն ծանոթացրին նրան Տաճարին, նրա պատմությանը և ճարտարապետությանը։ Հարգելի հյուրը դիտեց թանգարանը, որտեղ տեղադրված եկեղեցական անոթների, զգեստների և իրերի մեկ մասը պատրաստված է Հնդկաստանում, մի հանգամանք, որը մեծ ուրախություն պատճառեց նրան։ Ապա թանկագին հյուրը ընդունվեց Վեհափառի կողմից Վեհարանում։ Ընդունելության ժամանակ տեղի ունեցավ մտերիմ զրույց, որի ընթացքում Նորին Վեհափառությունը նշեց հնդիկ և հայ ժողովուրդների պատմական դարավոր կապը և շեշտեց, որ հնդկահայ գաղութը հայ մշակույթի, հայ ժողովրդի ազատագրական շարժման և հայրենասիրության մեծ գործում կատարել է գնահատանքի արժանի մեծ աշխատանք։

Հարգելի հյուրը իր ջերմագին շնորհակալությունները հայտնեց սիրալիր ընդունելության և իր նկատմամբ ցուցաբերված բարձր ուշադրության համար և լավագույն տպավորություններով Մայր Աթոռից մեկնեց Երևան։

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեխնամ կարգադրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվել են՝

1) Եկեղեցական արծաթեղեն անոթների և իրերի վերանորոգման արհեստանոց։

2) Եկեղեցական հնամաշ զգեստների նորոգման և կարի սենյակ։

3) Մայր Տաճարի և Մայր Աթոռի նորոգչական կարիքների համար մեկ աստաղձաղործարան։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՆՄ

Տոնական օրերին Մայր Աթոռի միաբան հայրերը օրանին կենաց բարոգությամբ շարունակել են միմիայն հավատացյալներին։ Այս օրերին քարոզեցին՝

1) Հոգեշնորհ Նոյեմ արեղա Սաղոյանը, ընտրան ունենալով «Կոտարումն օրինաց և մարգարէից Դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր» ապոքի խոսքերը։ Նա բացատրեց հավատացյալներին Քրիստոսի վերաբերյալ մարգարեությունների կատարումը, նրանց նշանակությունը և այն, թե Քրիստոս եղավ արդարն օրինաց և մարգարեից կատարումը։

2) Հոգեշնորհ Հայրիկ արեղա Ավետիսյանը խոսեց Մկրտության խորհրդի մասին, բացատրեց Մկրտության Ս. խորհրդի նշանակությունը քրիստոնյա մարդու կյանքում և շեշտեց հայ ժողովրդի հավատական մկրտության բարոյական և հոգևոր նշանակությունը։

3) Հոգեշնորհ Պարսկ արեղա Դեռոյանը խորունկ հուզումով քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորհրդի և դերի մասին։ Խոսելով հայ կյանքում Ս. Էջմիածնի կատարած պատմական մեծ առաքելության մասին, հոգեշնորհ քարոզիչը նշեց Մայր Աթոռի և հայ ժողովրդի հակասադրի միասնությունը և շեշտեց, որ այդ հակասադիրը երկու ճանապարհ չունի և չի ունենալու։ Մեր ժողովուրդը չի մոռանա Ս. Էջմիածինը, և մենք սրտագին այն համոզմունքն ունենք, որ այս միասնությունը վախճան չունի։

4) Հոգեշնորհ Մաշտոց արեղա Թաքիրյանը քարոզեց այն մասին, որ Քրիստոսով մարդկությունն ապրեց հոգեկան-բարոյական մեծ դարթոնք և նրանով հին աշխարհն իր հանապարհը դատավ դեպի եղբայրություն, արդարություն և սրբություն։